

COVID-19 Պատվաստանյութի Խաբեություններ

Երբ առողջական ճգնաժամ է լինում, խաբեքները միշտ ուղիներ են գտնում մարդկանց իրենց գումարների վերաբերյալ խաբելու համար: Կորոնավիրուսային համավարակի ընթացքում նրանք օգտվում են մարդկանց վախից, անհանգստությունից և շփոթությունից: Նրանք վաճառում են ապրանքներ, որոնք չեն աշխատում, գումար են գանձում ապրանքների համար, որոնք անվճար են, և գողանում են անձնական տվյալներ:



Խաբեքները թիրախավորում են տեղի բնակչությանը նոր, պատվաստանյութի հետ կապված սխեմաներով: Զգույշ եղեք:

Եթե ինչ-որ մեկը ձեզ առաջարկի վաճառել պատվաստվելու համար պայմանավորվածություն, դա խաբեություն է:

- Քանի դեռ պատվաստանյութի պաշարները սահմանափակ են, պատվաստանյութը տրամադրվում է մարդկանց խմբերին տարբեր ժամանակահատվածներում: Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) տեսնելու, թե որ խմբում եք դուք և՝ երբ ձեզ կտրամադրվի պատվաստանյութը:
- Եթե դուք այն խմբում եք, որին այս պահին տրամադրվում է պատվաստանյութ, գրուցեք ձեր բժշկի հետ կամ այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) պայմանավորվածություն նշանակելու համար: Անձինք, որոնք հասանելիություն չունեն ինտերնետին, կամ աջակցության կարիք ունեն, կարող են զանգահարել 1-833-540-0473 հեռախոսահամարով՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30 ընկած ժամանակահատվածում, որպեսզի ստանան օգնություն ժամադրություն նշանակելու հարցում:
- <<Պատվաստանյութին սպասելու ցուցակ>> գոյություն չունի, և դուք չեք կարող վճարել պայմանավորվածություն նշանակելու համար:

Եթե ինչ-որ մեկը ձեզ առաջարկում է վաճառել պատվաստանյութ, հատուկ, ցածր գնով տարբերակ գտնել, կամ գաղտնի կերպով պատվաստանյութ ձեռք բերել ձեզ համար, ապա դա խաբեություն է:

COVID-19 պատվաստանյութը տրվում է անվճար և անկախ ներգաղթային կարգավիճակից:

- COVID-19 պատվաստանյութ ստանալու համար ձեզնից վճար կամ համավճար չի գանձվի: Պատվաստանյութը տալու համար բժիշկը կամ դեղատունը կարող է գանձել վճար, բայց այն պետք է վճարվի պետական և մասնավոր ապահովագրական ընկերությունների կողմից: Առողջապահական ապահովագրություն չունեցող մարդիկ COVID-19 պատվաստանյութը կարող են անվճար ստանալ:
- COVID-ի պատվաստանյութը ստանալիս ձեզ ՉԵՆ հարցնի ձեր ներգաղթային կարգավիճակի մասին: Ձեր բժշկական տեղեկությունները գաղտնի են: Ձեր բժշկին չի թույլատրվում դրանք ներգաղթային պաշտոնյաներին տրամադրել:
- Այցելեք [Լոս Անջելես Երջանի Ներգաղթյալների Գործերի Գրասենյակի COVID-19-ի էջը](https://www.lacounty.gov/health/immigration) ներգաղթյալների համար COVID-19-ի վերաբերյալ թարմացումների համար:

Եթե պատվաստանյութ գնելու և անմիջապես ձեզ ուղարկվելու առաջարկ ստանաք, դա խաբեություն է:

- Չկան պատվաստանյութի <<գաղտնի>> աղբյուրներ, որտեղից կարելի է գնել այն: Եթե որևէ բան ուղարկվի, ապա դա իսկականը չի լինելու:

COVID-19 Պատվաստանյութի Խաբեություններ

Խաբեքաներն ամենուր են

Խաբեքաներն աշխատում են առցանց, սոցիալական ցանցերում կամ փողոցում: Նրանք կարող են զանգահարել, գրել, տեքստային կամ էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել: Նրանք կարող են մոտենալ ձեզ նաև փողոցում, թակել ձեր դուռը՝ պատվաստանյութ կամ պատվաստվելու համար պայմանավորվածություն առաջարկելով:

Ուշադրություն դարձրեք այդ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇՆԵՐԻՆ կամ հնարավոր խաբեության մասին նախազգուշացնող նշաններին:

- Ձեզ հետ կապ են հաստատում և պահանջում անմիջապես տրամադրել ձեր անձնական կամ ֆինանսական տեղեկությունները: Դա կարող է լինել ձեր Սոցիալական Ապահովության, բանկային հաշվի կամ կրեդիտ քարտի համարը, Medi-Cal-ի կամ Medicare-ի մասին մանրամասներ: ԵՐԲԵՔ չտրամադրեք այդպիսի կամ այլ անձնական տեղեկություններ:
- Դուք պատվաստանյութը գնելու և այն փոստային տարբերակով ձեզ ուղարկվելու առաջարկ եք ստանում: Չկան պատվաստանյութի <<գաղտնի>> աղբյուրներ, որտեղից կարելի է գնել այն: Եթե որևէ բան ուղարկվի, ապա դա իսկականը չի լինելու:
- Դուք տեսնում եք կեղծ պատվաստանյութերի կամ «հրաշք բուժման» գովազդներ, որոնք օգտագործում են վիտամիններ կամ այլ սննդային հավելումներ: Խաբեքաները խթանում են դրանք, չնայած ապացուցված չէ, որ նրանք գործում են: FDA-ը նախազգուշական նամակներ է տրամադրել բազմաթիվ ընկերությունների՝ այդ ապրանքները վաճառելու համար, որոնք պնդում են, որ կանխում, օգնում կամ բուժում են COVID-19-ը:

Եթե ձեր համայնքում ոչ հայտնի որևէ մեկը (օրինակ՝ բժիշկ, առողջապահական կլինիկա, դեղատուն, շրջանի առողջապահական ծրագիր) ձեզ պատվաստանյութ է առաջարկում, մտածեք կրկնակի:

Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կամ ճշտեք դա ձեր բժշկի հետ:

Թույլ մի՛ տվեք խաբեքաներին հաղթել:

Օգնություն Ստացեք

- **Բժիշկ գտեք.** զանգահարեք 2-1-1 հեռախոսահամարով Լոս Անջելեսի Շրջանի տեղեկատվական գծին կամ այցելեք [211LA կայքը](https://www.211la.org):
- **Գտեք ռեսուրսներ, ինչպիսիք են սնունդը, դեղամիջոցները և այլ անհրաժեշտ պարագաները.** զանգահարեք 2-1-1 կամ այցելեք [211LA կայքը](https://www.211la.org), կամ Հանրային Առողջապահության [ռեսուրսների կայքէջը](https://www.hhs.gov/healthcare/211/):
- **Հաղորդեք հավանական COVID-19 խաբեության մասին և օգնություն ստացեք՝ փորձելով վերադարձնել ձեր գումարը.** կապվեք Լոս Անջելես Շրջանի Սպառողների և Ձեռնարկությունների Հարցերով Վարչության (DCBA) հետ. [dcba.lacounty.gov](https://www.dcba.lacounty.gov) կամ 800-593-8222 հեռախոսահամարով:
- **Հաղորդեք պատվաստանյութերի, փորձարկման կամ բուժման արտադրանքի վերաբերյալ կասկածելի պնդումների մասին.** հաղորդեք FTC-ին [ftc.gov/complaint](https://www.ftc.gov/complaint):

COVID-19 Պատվաստանյութի Խաբեություններ

Տեղեկացված եղեք՝ վստահելի տեղեկատվությամբ:

Զգուշացեք կեղծ լուրերից և կեղծիքներից, ինչպես նաև COVID-19 խաբեություններից

COVID-19-ի դեմ Պատվաստանյութ

- Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) և գրանցվեք COVID-19-ի դեմ Պատվաստանյութի էլեկտրոնային Տեղեկագրի համար:

COVID-19

- Այցելեք ph.lacounty.gov/media/Coronavirus, գրանցվեք մամուլի հաղորդագրությունների համար, կամ հետևեք մեզ @lapublichealth
- Այցելեք Շրջանի COVID-19-ի կայքէջը covid19.lacounty.gov
- Ստուգեք CDC-ի կայքը [cdc.gov/coronavirus](https://www.cdc.gov/coronavirus)

Խաբեության Մասին Ահազանգեր

Տեղեկացված եղեք վերջին խաբեություններից և նախազգուշական միջոցներից, որոնք դուք և ձեր ընտանիքը պետք է ձեռնարկեք:

- Իմացեք Լոս Անջելես Շրջանի Սպառողների և Ձեռնարկությունների Հարցերի [սպառողների ահազանգերի](#) վերջին խաբեությունների մասին:
- Այցելեք Լոս Անջելես Շրջանի [Ներգաղթյալների Գործերի Գրասենյակի COVID-19-ի](#) կայքէջը
- Գրանցվեք Թոշակառուների Ամերիկյան Ասոցիացիայի (AARP) [Խարդախության Մասին Ահազանգերի Դիտմանը](#)
- Գրանցվեք Առևտրի Դաշնային Հանձնաժողովի [սպառողների ահազանգերը](#) ստանալու համար